

ՄԱՐԻԲԱՍԵԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ

ԸՍՏ Մ. ԽՈՐԵՆԱՑԻՈՑ

(Տ՝ա. Հա. ԽԱ. 42 54, 111, 224, 308, ԽԲ. 35, 123, 220).

ԳԼՈՒԽ ԺԱ

✓ Հնուքիւն Հայաստանի կամ Մեծիկ Սյունիոյ քաղաքութեանց՝ զստ արտաքին պատմագրութեան - Բիսիդիւնի կամ յաւ եւս՝ Դաւիթի վշտասպեայ արձանագրութիւնք և յիշատակութիւնք Հայոց մասին . - Թաղաւորք վանի և Ստարադայ . - Հայաստանի միանկեղծ տէրութեան այլ և այլ ժամանակներն . - Եկք և կամ օտարասեռ պատուաստք հայ բնոյն վրայ . - Քաղաքական , աշխարհագրական և իմաստասիրական ընծայութիւնք հնոյն Հայաստանի կացութեան . - Եզրակացութիւն :

Յետ փոքր 'ի շատէ զննելու Հայաստանի և Արմենիոյ անուանոց ծագումը և կիրառութեան հնութիւնը , այժմ գրեցելով տոհմային պատմագրութիւնը՝ լրսնեք թէ արտաքինն մինչև ուր կը ձգէ այն ազգի պատմութիւնը , և ինչ լոյս կը ծագէ անոր հորիզոններուն վրայ , ինչպիսի թագաւորութիւն կամ իշխաններ կը ցուցնէ մեզի , և թէ մեր բնաշխարհն ինչ յեղափոխութեանց ենթարկուած է յընթացս ժամանակաց , որչափ ժամանակ որպիսի վարչութիւն ունեցած է :

Արեւմտեան պատմագրութիւնն՝ Իրացընէ կը վիպագրէ ինչ ինչ զաւխարհէս և զազգէս մերմէ : Քսենոփոն (Արլաւանք կիրարսի . ԳԼ. Ա.) կը ցուցանէ յայտնապէս թէ առաջին Աքեմենեաններու ժամանակ՝ Հայաստանի վրէժներն հայկազունի թագաւորներ , Երուանդ (Սակաւակեաց) , Վարդան , Տիգրան և Շաւարշ :

Բայց եթէ յոյն մատենագիրն Հայոց վրայ ըրած վեր 'ի վերոյ և անուղղակի յիշատակութիւնն ստոյգ և պատմական համարելու ըլլանք , միայնտական

և հզօր թագաւորութիւն մ'ունեցած պիտի չըլլան Հայք . վասն զի Կիրոսի անվախ արշաւելն 'ի Հայս , և հարցընելն ցթագաւորն Հայոց թէ որչափ զօրք ունի , և արքայորդւոյն պատասխանելն թէ 40000 հետևակ և 8000 հեծելազօր , և հուսկ Հայոց թագաւորը ձերբակալելն՝ այս կը ցուցնեն :

Սաղայն ենթադրելու ենք թէ այս երկասիրութեան մէջ Քսենոփոնի նըպատակն այն չէ , և ոչ ալ պատմական ազգիւններէ կամ Կիրոսի բերնէն առնելով այն զօրաց հաշուելու մէջ կը բերէ . այլ իբրև վիպասանութիւն և գուցէ ինքնահնար թիւ մը , համեմատելով անշուշտ Հայաստանի այն ժամանակի զինուորական զօրութիւնը՝ Մարաց և մանաւանդ Պարսից զօրութեան հետ , որ մեծին Կիրոսի առաջնորդութեամբ արդէն սկսած էր ահարկու լինել բոլոր զրացի ազգաց : Ուստի եթէ ստոյգ իսկ համարելու ըլլանք այն հաշուելիւն , դարձեալ հաւանորէն միշտ համարելու եւք թէ յանպարտաստից ժողովածներն են , որ նոյն ժամանակի համար շատ բան ըսել է , և բարեկարգ և խաղաղ իշխանութեան մը կացութեանն առհաւատուեայ է . ապա թէ ոչ Կիրոս չէր կրնար այնպիսի թեթեւածեւն զնդաւ մտնել 'ի Հայս , և կամ ներգութեամբ մտնելէն ետքը՝ առանց դժուարութեան և անվրէպ առ Աժդահակ կամ Կիւրքսար ըրած խոստմունքը կատարել , ըսա նոյն վիպասանին : վասն զի Երուանդ արդէն իսկ հարկ և զօրք ապր դադրեցուցեր էր Մարաց թագաւորին , և գուցէ պատերազմի պատրաստութիւն ևս կը տեսնէր :

Այս և ուրիշ պատճառայ վրայ հիմնաւ առանց ուղղակի հակառակելու ֆսենսիօնի, որոյ նպատակն ինչպէս բսինք Հայոց պատմութիւն ընել չէր, այլ հարեանցի յիշատակել միայն ըզկիրոս իբրե զիցազն՝ իմաստուն վարիչ ցուցնելու համար զբացի թաղաւորաց: Ուրեմն, այս կէտս շատ հաւանական է և կրնի թէ աներկբայ իսկ, թէ Հայք առ Երուսաղեմէն Տիգրանաւունէին իրենց հօր ինքնավարութիւնն, և ոչ թէ նենգութեամբ կիրաւի և կամ պատերազմաւ, այլ բարեկամական դաշնակցութեամբ միանալով՝ կործանեցին ոչ թէ Բարեւազուց, այլ Մարաց և Աշդահակայ նման բռնաւորի մը տէրութիւնը, զոր մասնաւոր կերպով կը հաւտատեն Հերոդոտոսի տուած աւանդութիւնքն:

Դեռ աւելի յտուշ երթալով, կտեսնանք և Դիոգոր Սիկիլիայի՝ Նինոսի ժամանակակից հայ թագաւոր մը կը յիշեն՝ Բարզանէս կամ Վարզանէս առնամբ: Բայց այս հեղինակաց երկասիրութեանց պատմական արժէքէն աւելի՝ առասպելական համբաւն մեծ ըլլալով, չենք ուզեր դիւրաւ հաւատք ընծայել: Եւ եթէ պատմական ճշմարտութիւն ևս համարելու ըլլանք զայն, անշուշտ նոր անձ մը պիտի չըլլայ, այլ ֆսենսիօնի և Հերոդոտոսի վերը յիշած Վարզան կամ Վարզանէս, որ աւելի հայկական ձև ունի, և յոյն հեղինակն ըստ իւր ազգին հնչման սկըզբնական վրիժը պի վերածեր է:

Սակայն պէտք է լաւ յուշի ունել այս կէտս, թէ արեւմտեան պատմագրութիւնն կարող չէ մեր հնագոյն ժամանակի (Հայկազունեաց) պատմութեան վրայ նոր լոյս ծագել, և կամ անոր նախնական դարերու կացութիւնը գտել, առանց նախնաբար լուսաւորուած ըլլալու նա ինքն՝ ի հայկական աւանդութեանց. վասն զի անոր անյիշատակ ժամանակին հնութեան հետ բաղդատելով՝ ինքն դեռ երեկեան կամ նոր ծնած մանուկ մի է: Ուրեմն պէտք է առեւելեան ազգաց՝ այսինքն է Ասորե-

ստանեայց և Արեաց յիշատակարաններուն և Արմենակաւ կոչուած արձանագրութեանց զիմել: Որովհետեւ ասոնք ոչ միայն իբրե զբացի ազգ և մեծագոր պետութիւններ՝ հանդիսարան և հանդիսատես եղան Արմենիոյ ժողովրդոց արութեանց, մրցանաց և ամենայն անցից, ոչ միայն անոնց վրայ ատեն ատեն արշաւած և նուաճելու զած ժամանակ՝ անոնց զօրութեան փորձը առին, այլ նոյն իսկ վանոնք երբեմն իրենց տէրութեան հաւատարիմ և քաջ պաշտօնեայք և զօրավարներ զործածեցին. և յաճախ ևս անոնց զէնքերն և զօրութիւնը իրենց աշխարհը հրաւիրելով՝ սերտ յարաբերութիւն ունեցան, անոնց աւանդութիւններէն առին և գրեցին անոնց վրայ:

Դարեհ վշտասպետայ Չ. դարուն նախքան զԲրիտանոս՝ ի սեպաձև արձանադրութիւնս Բիսիդունի, ի մէջ այլոց ապստամբ և նուաճեալ ազգաց՝ կը թուէ յանուանէ նաև զԱրմենիա, և անոր երեք անգամ ապստամբելը կը յիշէ: Հոն կը նկարագրուին երեք արիւնահեղ պատերազմներ, զորս Դաւաւրդ հայագի զօրավարին ձեռքով ըրաւ Հայոց զէմ, յորում այն թագաւորին բացատրութենէն, և անկէ աւելի ի Հայս ըրած արշաւանաց անյաջողելից լուսեցնէ՝ կը տեսնուի թէ յալթուեցաւ Արեաց բանակն Տիգրաւ ամրոցին քով, և Հայերն արշաւեցին մինչև Ասորեստան, ըստ Լընորմանի: Երկրորդ անգամ կը զրկուի Ումիզէ Հայաստանի վրայ, և կրկին ճակատք կը յիշուին մօտ Աշիւարայ, յորս Արեաց բանակն մեծամեծ զոհեր ըրաւ Հայաստանի անմատոյց լեռանց և կրճից մէջ:

Այս ժամանակիս Դարեհ զԲարեւուն պաշարած ըլլալով, որ կ'ուզէր ապստամբել, կ'երեկ թէ նորէն չէ կրցած նուաճել զՀայս. վասն զի յետ յիշատակելով թէ զԲարեւուն առնեցին վերջը՝ դարձայ և նուաճեցի զՄարս, և Հայոց մասին լուսեցնալ կ'անցնի, մինչդեռ Ումիզէ այն կողմերը պաշտպանողական դիրք բռնելով՝ դեռ անոր օգ-

նութեանը կը սպասէր: Սակայն ափսոս որ յայտնապէս չի յիշուիր այս արձանագրութեանց մէջ՝ այն ժամանակի ապստամբ Հայոց մեղի ծանօթ հայկազունի թագաւոր մը, և չենք գիտեր թէ ինչ պատճառաւ եղած են այն ապստամբութիւնքն: Լընթուման՝ երուանդեանն Տիգրանայ ժամանակ և կոմանկէ քիչ ետքը կը համարի այն գէպքը, որ հաւատարիմ նիզակալից էր կիրութիւն: Իսկ ապստամբ Հայք թուի թէ կ'ուզէին անոր որդին գլխահազն գահընկէց ընել, յորում ժամանակի գուցէ թագաւորէր 'ի վերայ Արեւիկայի, և պաշտպանէր զհայ իշխանն զօրութեամբ այն դաշնաց, զորս կռնցին երբեմն մեր Տիգրան և կիրոս:

Սակայն ո՞ր թագաւորի ժամանակ և ինչ պատճառաւ ալ եղած ըլլան, այս յայտ է թէ քան զԲաբելոնացիս, զՄարս և մնացած միւս հարկատու ազգերն, որք 'ի միասին ապստամբեցան, աւելի զօրաւոր և ընդդիմացողք Հայք եղան այն ժամանակ: Թէպէտ և ոչ այնչափ լի նու գօրութեամբ, որչափ աւելի իրենց ամրապարիսպ լեռանց չլիմաներովը և հակառակորդին զանազան անյաշուութեանց պատճառաւ, իրովհետեւ և թէ այն սեպածե արձանագրութեանց ընթերցմանն ուզենք կատարեալ պատմական կերպարանք մը տալ, այն աղքատ ամենուն ևս շուտով և գիւրաւ յաղթելով Պարսիկք՝ անկէ վերջը միշտ նուաճեալ պահեցին զանոնք: Իսկ Հայոց մասին՝ հակառակը կը տեսնենք այն արձանագրական պատմութիւնէն, որ ըստ մեզ ամենագորաւոր և եզրակացուցիչ փաստ մի է:

Դեռ աւելի վեր ելլելով ցութերորդ դար նախ քան զՔրիստոս, Հրէից գրքերն անգամ մեր պատմութեան վրայ երբեմն չըսեմ աղբերաբար լուսոյ հոսանք, այլ գէթ յանկարծածագ փաղփիւններ կ'արձակեն, զորս եթէ ուրիշ բանական և պատմական և աշխարհազրական անդարդարձութեամբք 'ի մի կենդանացնելու ըլլանք, աղօտ լուսաշնկար մը կրնան ներկայացնել մեր առ-

ջն, և աւելորդ Մասնաց և անոր քաջարի որդւոյ գործերն յիշատակել նինուէի և Բաբելոնի և Ելիւստանայ նըշանաւոր թատերաց վրայ:

Այս գործերէն մէկն՝ Հրէից գրոց զԱրարատեան թագաւորութիւնն և զորդիս Թորգոմայ կամ զԹորգոմացիս՝ Բաբելոնի վրայ հրաւիրելն է՝ 'ի շարս գում պատերազմող ժողովրդոց. որ յայտնի կը ցուցնէ թէ Արարատայ թագաւորութիւնն՝ յովերորդ դարուն անգամ զօրաւոր էր քան զամենայն նախարարութիւնս Մեծին Արմենիոյ, այսինքն է Միննոյ և Աքանազայ, և այլն: Երկրորդ, Սենեքերիմայ Ասորեստանայ թագաւորին որդւոյ բարբարոս հայրապանութեամբ 'ի Հայս ապականել տալը:

Այս պատմական, անժխտելի և լուսէն աւելի պոյծառ գէպքին վրայ ոչ ոք կարող է տարակոյս հանել: Վասն զի անոր համաձայն կը վկայեն Գաղղէացւոց՝ Բերոտոսի և Արիւղենոսի և Բաղմավիպի հատուկտր հատուածքն:

Դարձեալ, հաւասարապէս ճշմարիտ է թէ Արարամեղեայ և Սանասարայ աշուանքն, 'ի Հայս ապականելն յետոյ մէկ մ'այլ չենք գտներ ոչ Հրէից գրոց և ոչ իսկ Ասորեստանայ թագաւորաց պայապատութեան ցուցակին մէջ: Ուստի շատ հաւանական է և գրեթէ անտարակոյս՝ թէ Հայոց հետ աղքատացնեցան: Եւ ասոր իբրեւ պատմական և անժխտելի հաւաստիք է Արժուանաց աղքատոհմին յորդուց Սենեքերիմայ սերելուն մինչև ց'ի. դար պահուած կենդանի անանդութիւնն. զի երբ Շաւասայ Արժուանի 'ի մականախաղուն՝ Յազկերտի որդւոյն ձեռքէն հանեց ըզգնուակն, և Շապուհ մականաւ զարկաւ անոր, ընելով երդիմարանութեամբ. « Ծանիր զքեզ »: — Շաւասայ արձակ համարձակ պատասխան տուաւ. « Այո, կը ճաննամ և զիս արքայորդի 'ի սերմանէ Սանասարայ, և ունիմ իշխանութիւն ընդ եզրարս քո համբաւելու զբարձն արքունի »:

Այլ եթէ ինչ կերպով յաջողեցաւ

Ասորեստանի իշխանազունց Հայկազունի իշխանուհեաց հետ ամուսնանալն և հայանալն, և մեր ուր թագաւորին ժամանակ, հետագայ այս երկու կէտերով մեզի հաւանական կ'երևի: Կամ այն է՝ թէ Հայաստան այն ժամանակ էր իւրրեւ հարկատու և նահանգ Ասորեստանեայց հզոր պետութեան, և շարունակ անոնցմէ ապստամբելու ձկտումն ունէր, և Սենեքերիմայ որդւոց այն դէպքն ևս յանկարծակի վրայ դալով՝ աւելի ևս առիթ տուաւ զլուս քաշելու, և կամ ինքնօրինութեան դրօշն անդէն իսկ պարզած էր ընդդէմ նոցա, և զօրաւոր ախոյեան արձանայեր էր՝ Սկայոր. գոյն առաջնորդութեամբ. զոր քիչ յետոյ իր որդին Պարոյր բողբոջին 'ի գլուխ հանեց՝, և հիմն ձգեց Հայկազունեայ երկրորդ հարստութեան. և զուցէ այս պատճառաւ հայրասպան իշխաններն 'ի Հայս ապաւինեցան, և մեծ ընդունելութիւն և պատիւ գտան. իսկ Ասորեստանեայք ոչ բարեկամաբար և ոչ զինու զօրութեամբ կարողացան յետոյ պահանջել զանոնք: Իւր ըստ վկայութեան փիլ. Շմիթի (Պատմ. Հին Ազգ. էջ 342) Ազրամեիք Հայաստանի օգնական և վարձուոր զօրաց գլուխըն անցնելով՝ անցաւ յԱսորեստան Հեսարատաունի ժամանակ, բայց գերի ընկաւ և սպանուեցաւ:

Արդ եթէ Հայ ազգին և աշխարհին անցելոյն և ներկային բնական և բարոյական հանգամանքն ևս քննելու ըլլանք, այնուհետեւ չէ մարթ չհամոզուիլ թէ Ասորեստանեայց, Մարաց և Պարսից հպատակ և անզօր ազգ կամ թաւաւորութիւն մ'եղած չէ նա միշտ, ինչպէս կը համարին օմայդ, մարիաւսեան կամ Մ. Խորենացիի պատմութիւնը մերժելուն վատ հետևութեամբ:

Բաց 'ի Մ. Խորենացիէ՝ նոյն իսկ Հայաստանի կենդանի աւանդութիւնք և զրոյցքն կ'ապացուցանեն, Ա. թէ մեր ազգն այլ և այլ դարուց և ժամանա-

կաց շրջաններու մէջ՝ այլատեւ ազգեր և իշխանազուններ առ ինքն ձգած է, և քաղաքականապէս և բարոյապէս և բնական ազգակցութեան օրինգը եկողները ձուլելով և պատուաստելով իւր հայկական բնոյն վրայ, ընդհանուր Հսլ. յուրիւն կամ հայ ժողովուրդ մը ձևացուցեր է. և զուցէ անոր հին շառաւիղներէն անընդհատ յաշորդութեամբ մնացած արդի սերունդն ուրիշ բան չէ, բայց եթէ Ասորեստանեայց, Արեաց, Հրէից, Սինէացւոց, Աղուանից և Իբերիացւոց և ուրիշ շրջապատող ազգաց արիւնէն և 'ի տարերաց և 'ի բարուց բաղկացեալ զանգուած մը. զոր եթէ ըստ իւր առանձինն բարեմասնութեանց և թերութիւններուն քննելու ըլլանք, լաւ ևս կը ճանչցուի: Նոյն բանը կ'ապացուցանէ նաև անոր լեզուին բնադրոյմն: Սակայն այս ենթադրութիւնները բառական և հոգեբանական ուսմանց պարապող բանասիրաց թող լով կ'ուզենք պատմական և մեծ արժէք ունեցող վկայութեամբ ևս հաստատել զայն այս տեղ:

Ստրաբոն (Է. Գլ. ԺԴ.) Արտաքսիասայ (Արտաշէս) և Ջարիադրեսայ վրայ խօսելով, (որոց մէկն Աննիբալայ ժամանակակից և մտերիմն էր, և որոց վրայ Խորենացին յիշատակութիւն մ'անգամ չ'ըներ), այսպէս կ'ըսէ. « Սրա մեծացուցին զերկիրն (Հայոց) հատեալ ինչ ինչ 'ի դրակից և սահմանակից ազգացն, 'ի Մարաց՝ զԿասպիանէ և զՓանիդիս և Բասորուպիտոն. յԻբերիացւոց՝ զԵռնակողմանս Պարիսպրեայ և զԳորդինի և զԳովգարինի յայնկոյս Կուր գետոյն. 'ի Խալիբայց և 'ի Մոսսնիկեայց՝ զԿարինիդիս և ըզֆաիքսենի, որք սահմանակիցք են փոքուն Հայոց կամ բաժինք նորա. 'ի Կատալոնեայց՝ զԿիսիլինէ և շուրջ ըզկողմամբ Անտիտաւրեսայ, և յԱսորոց՝ զՏարոնիսիս. որպէս զի ամենեցուն սոցա լինել համաբարբառս և համալե-

1 Այս վերջին կարծեաց լաւ կը համաձայնի Մարիբաւսեան կամ Թոհմային պատմագրութիւնն, որ կ'աւանդէ մեզ թէ Պարոյր միացաւ

ընդ Կիւքսարայ արքային Մարաց՝ ընդդէմ Ասորեստանեայց, Հայաստանի վրայ անկախ թագաւորելու դաշմար:

զուս և Գայտնի է թէ հայերենի հա-
մար կ'ըսէ. վասն զի այն ազգաց իշ-
խողն և նուաճողն նիւթապէս՝ պէտք
էր որ ի իսէր բարոյապէս ալ, և ոչ թէ
ինքն ընդհակառակն անոնցմէ նուա-
ճուէր։ Եւ հայ Հերոդոտոսն իւր պատ-
մութեան Ո. գրոց ժ.Գ. զվխուս մէջ նոյն
բանը քաջին Արամայ համար կը վկայէ.
« Եւ հրաման տայ բնակչաց (նուա-
ճեալ) աշխարհին ուսանել և խօսել
զլեզուս հայկականն »։

Արեւմտեան առանց շատ իսկ յաճախե-
լու ուրիշ պատմական փաստեր, կը
դառնանք հարցրենք այժմ ընդդիմա-
խօսաց. եթէ յիրաւի Հայ ազգն միշտ
տկար, յետաձնաց և ընկճեալ ժողո-
վուրդ մ'եղած է, լինչպէս կըցաւ ուրեմն
այս ամենամեծ դործը դարուց 'ի դարս
կատարել, ընկղմելով և իւրացնելով
այն բազմալեզու բազմալեզի ժողո-
վուրդը իւր հայ զանգուածին հետ,
փոխանակ ինքն անոնց մէջ ընկղմուե-
լու և կորսուելու։

Այս ըստ մեզ զօրաւոր փաստ մի է
և անբացասելի ճշմարտութիւն կ'երևի,
և պարզապէս և քմահաճոյ ենթադրու-
թեամբ կարող չեն հակառակորդք լու-
ծել այն խորհրդաւոր և պատմական
հանդոյցը. ուստի ծանրախոհ քննադա-
տութեան պէտք է ենթարկել, հնազոյն
աւանդութեանց վրայ միշտ հիմնուե-
լով, Որովհետեւ բնաւ մէկ ազգի պատ-
մութեան մէջ լսուած չէ՝ թէ աննշան և
համեմատութեամբ բուռ մը բիրտ և
ընկճեալ ժողովուրդ մի, միշտ նոյն փի-
ճակի մէջ մնալով, միացուցած ըլլայ ի-
րեն հետ եթէ զօրութեամբ զինուց, և
թէ բարոյապէս և քաղաքական օրինօք՝
ուրիշ տասնապատիկ անդամ հզօր և
քաղաքականացեալ ազգեր. ինչպէս
մոդէզի մը չէ մարմէ կլանել զՊոս օձ, և
կաթիլ մի չլրոյ զովկլաննու ծով, Եւ մա-
նաւորէն հեթանոսութեան ժամանակ,
յորում որչափ որ մէկ կողմէն անարգել
կարէին խառնուիլ ազգք և ազինք
իրարու հետ՝ կրօնական անխորու-
թեան պատճառաւ, միւս կողմանէ ալ
անկարելի էր, որովհետեւ հիմնական

պէս քրիստոնէական եղալորսիրու-
թեան և ընկերհաշտութեան և կրօնից
յօդիլ պատճառ մը կը պակսէր. և
ազգք և ազինք իրարու դէմ կը մտա-
յին. մանաւանդ թէ ցեղապետաց փո-
քրիկ իշխանութեանց ինքնազուլս ըն-
կերական բաժանումը և ազգային ա-
րարողութեանց և ընտանի զից խրո-
րութիւնը՝ ընդհանրապէս ծայրայեղ
և անհաշտ թշնամութեան կը տանէր։
Մեծն Աղեքսանդր անգամ իւր նա-
խորդներէն դարով յառաջ երկնած
այսպիսի խորհուրդ մը չկրցաւ Ասիոյ
մէջ կատարել, բոլոր յունական հրա-
պուրիչ քաղաքագիտութեամբ և ա-
րուեստիք, մինչև որ նախ աշխարհա-
կալութեամբ շնուածեց անոնց ուժն և
զօրութիւնը։

Բ. Հայաստան թէ իւր բնական ամ-
բողութեամբ և լեռներով և թէ աշխար-
հագրական զրիւքն և առատագեղ ար-
գասաւորութեամբ, որք իւրեւ բարեբեր
կղզի մը 'ի վեր կ'ամբառնային յընդ-
արձակածաւալ կեդրոնի անդ հնոյն
Ասիոյ ծաղկեալ ժողովրդոց, իրաւամբ
մեզի ենթադրել կու տայ թէ բացար-
ձակապէս միշտ յետաձնաց և ուրիշ
ազգաց տակ նուաճեալ ժողովրդեան
մը խանձարուրք եղած չէ, այլ մա-
նաւանդ թէ թատր բազմապիսի քա-
ղաքային, վաճառականական և պա-
տերաւական ներկայացուցմանց, Եւ
ժամանակ ժամանակ ինքն իսկ ունե-
ցեր է Ատրեստանեայց, Արեաց, Փիւ-
նիկեցւոց և ուրիշ զրացի ազգաց պէս՝
իւր կանգման և կործանման գեղեցիկ
և տխուր դարերը, պատերազմական
և քաղաքական յաղթանակաց և ազ-
դեցութեան փառաւոր օրերն։ Նա ին-
քրն ևս մարդկային ազգի պատմու-
թեան ծովածուփ ովկիանոսին մէջ՝
բազմամիսիս և դրացի ժողովրդոց հետ
'ի միասին հանգոյն ալեալ մերթ ելած
բարձրացած է յանիւս բաղդաւորու-
թեան և յառաջադիմութեան, և մերթ
խոնարհած 'ի վիհս յետաձնացութեան։
Առ այս եթէ յանիւսի ևս լռեցնելու
ըլլան անոր անցեալ փառաց և մեծու-

թեան արձագանքն հնչեցուցանող և քաղցր յիշատակներն անմահացնող մարիբասեան կամ խորենտյայ պատմագրութիւնը, սակայն դարձեալ չեն լուեր բնաւ անոր անցեալին շքեղ հանգամանքներն ու ազդային հնաւանդ աւանդութիւնքն, թէպէտ և մեծաւ մասամբ հետակորոյ կան 'ի գետնի, կամ այլք զոհ եղած են համայնածախ ժամանակին: Կը խօսին կրօնական դիք և դիցանուէր պաշտամունք իսկ. բարբառ կ'արձակեն յամենուստ հնոյն Հայաստանի գաւառաց և քաղաքաց պատկառելի յիշատակարարներ, ևս և սեպածն արձանագրութիւնք՝ որը հետզհետէ 'ի լոյս եկին և գալոյ են: Միով բանիւ չի լուեր հնոյն Ասիոյ աշխարհագրական դիրքն և վաճառականական և քաղաքային վիճակն:

Տեղափոխենք մէկ մը Եւրոպոյ տը. դի քաղաքականութիւնը հանդերձ իւր բազմամարդ և քաղաքաժողով ընկերութեամբ՝ յԱսիա, իւր առաջին գեղեցիկ և ընդարձակ խանձարուրքին մէջ, ուր ծնան մարդկային ազգք և կրօնք և քաղաքականութիւն, սնան և բարդաւաճելով՝ տարածեցան աշխարհիս ամէն կողմը: Տարածեցը զանոնք՝ 'ի Բաբելոն, 'ի Նինուէ, 'ի Թեբայիդ, 'ի Միջագետս, 'ի Պաղեստին, 'ի Հնդկաստան և 'ի կողմանս Իբերիոյնոց (Վրաստան), և 'ի Պոնտոս և յԱլթայի, 'ի Սկիւթիա, 'ի Չինա, 'ի փոքրն Ասիա. և եթէ հին պատմութեան ուշ գնենք նա կը հաստատուէ թէ ասոնք ամէնքն ևս համեմատութեամբ իրարու բազմամարդ և ծաղկած աշխարհներ և ժողովուրդներ էին:

Արդ կարելի բան է ուրեմն, թէ այն աշխարհագրական և հրաշայի գիրքով երասխական յուռթի հովիտն՝ հանդերձ իւր սահմանակից նահանգներով,

որ կ'իյնայ յարեւելոյ կասպից, իսկ 'ի հիւսիսոյ և յարեւմտից կը համըռնեան զայն Սև ծով և Միջերկրականն, այսինքն է Մեծն Հայաստան կամ Արմենիա, որ այդ վերոյիշեալ ազգերէն և աշխարհներէն շրջապատեալ գագայն անոնց վաճառականութեան և քաղաքաժողով ընկերութեան կեդրոնը կը ձևացընէր, ինքն անմարդաբնակ և թափուր եղած ըլլար անոնց բարեմասնութիւններէն, նախապատմական և պատմական շքեղ սասպարիղէն և միշտ ընդհատ և անգործ: — Ոչ բնաւ. ոչսպիտի ենթադրութիւն մը բացարձակապէս հակառակ է ազգաց զարգացման օրինաց, որ կը վկայէ թէ քաղաքականացեալ ժողովրդոց կեդրոնը գտնուող ազգ մը թէպէտ և 'ի բնէ բարբարոս ևս եղած ըլլայ, միշտ անոնց զարգացման ենթակոյ է. (ինչպէս ասոր հակառակ բարբարոս ժողովուրդներէ յիշապատեալ ազգն ևս՝ Իրաքի որ 'ի բնէ հանձարեղ ըլլայ, դարձեալ միշտ անոնց յետամնացութեան հետ յետս կը կալայ): Հակառակ է նմանապէս անոր հին պատմութեանը, զոր աստ անդ կ'ընեն Հերոդոտոս, Քսենոփոն և Հրէից մատենաներն, Վտան զի ինչպէս վերջի դարուց պատմութենէն կը տեսնենք՝ հոն կը գիմեն գունդագունդ Պարսիք, Յոյնք, Հռոմք, Արաբացիք, Թիւրքք, Մոնղոլք, Օսմանցիք և սլաւոնական ազգեր. այսպէս ուրեմն նախնական ամենահին ժամանակի մէջ ևս՝ բնակչոք լեցուն էր և արեւելեան վերոյիշեալ ազգաց և ժողովրդոց հետ կը մրցէր ինքնափարութիւն ունենալու կամ պահպանելու համար, և իբրեւ հրապարիչ ոսկեկնիքն մը գոռ պատարազմուող և շահասէր վաճառականաց՝ մի միայն աւապարեղ՝¹ դարձած էր, vagina gentium,

¹ Արդարեւ, բնութեան այն ամենահարուստ և բիւր տեսակ բերքերով անուանի և գեղեցիկ երկիրը, բայց 'ի իւր պարսպապատ լեռներէն, որոնք կը պատապանէին զայն շուրջանակի ամենայն թշնամեաց յարձակմանց դէմ, կը տարածէր նմանապէս գեղեցիկ դաշտեր և արգասաբեր հովիտներ՝ ամէն կողմ, ինչպէսով, գինւով և իւղով, որոնք իւր բնակիչներէն գոռս պնէր

շրջապատող ժողովուրդներն ևս կը կերակրէին: Առանց չափազանցութեան կրնանք ըսել՝ թէ քան զայժմեան Զուիցերիա իսկ կը գերազանցէր հիւսուրցն Արմենիա: Անոր բարձրաբերձ լեռանց ստորոտները, կարկաշտահալ աղբերաց և գետոց մէջ կ'արածէին անմահ գեղեցկութեամբ ձիերու և ընտանի անասնոց հօտք և նախիք, որոնք Եգիպտոսայ, Բաբելոնի և Տիւ

ըստ ասելոյ առածին Հռովմայեցւոց :

Գ. Ուրեմն այսուհետեւ մարթ է եղ-
րակացընել թէ իրացընէ սուկ ինքնա-
հնար մտաց կեցծիք չէ Արամայ քա-
ջագործ աշխարհակալութեան և աշ-
խարհաշինութեան մասին աւանդական
տոհմային պատմագրութիւնն : Վասն
զի ինչպէս տեսանք՝ կոտորաս և 'իտ-
դոր Սիկիլիային ալ փոքր ինչ տարբե-
րութեամբ պատմութեան՝ կը յիշեն
Նինոսի ժամանակակից Հայոց թագա-
ւոր մը (Արամ), և Պարոյր զոր 'ի կոր-
ծանման Բաբելոնի, զոր կը կարգան

արդի բանասէրը Ներքովիայ կոթողին
վրայ, Բարշամայ և ուրիշ Ասորի թա-
գաւորաց զէմ ըրած դիւցապական
քաջագործութիւնքը : Խորենացւոյ խօս-
քերէն իսկ կ'երևի թէ յազգային ա-
ւանդութենէ մնացած էր այն աշխար-
հակալին ահունն, այսպէս և Անուշա-
ւանայ պատմութեան և 'իոյն իսկ Հայ-
կայ և Բելոյ հսկայից աւանդութիւնքն,
ըստ վիպասանութեան երգոց, 'Հոյ ազ-
գին մեծամեծ պատերազմները կը
հաստատեն ընդդէմ Բելանց և Տի-
տանեանց :

Կը շարունակուի :

Հ. Բ. ՍԱՐԳՍԵԱՆ

բոսի արքունիքն և շահաստանները կը ցնծացը-
նէին : Ըստ Հերոդոտոսի և Եղեկիելի : Ջրաշատն
Ասորին՝ իւր եղեկական գետոցն ընթացիւք մըշ-
տադարւոր գործելով չըջակայ երկիրները ընու-
թեան ամենագեղեցիկ տեսարաններ ևս կը ներ-
կայացընէ աշխարհի գիմաց : Արաքսան, Կոր-
գուաց լեռներն և Տաւրոսի շղթայք աստի, և
հիւսիսէն Կովկասու գօտիքն և Խաղտաց լեռ-
ներն՝ կը պահէին բոլոր երկիրը փաստակար և ա-
ւերիչ հողմերէ : Եւ ազատն Մասիս, որ այնի,
շատակ ժամանակէ 'ի վեր իւր հարազատին, այս-
ինքն Արաքսածի հետ՝ կը պրտոնական անդնդոց
վեր բարձրանալով՝ եղաւ յիրաւի տեղի և առն-
ազատաց քաջերու, կիսով չափ՝ առատ և ընախ-
աւորակ կը պատարաստէին ազատ երկրին : Նոյնն
իւր յաւերթական և ձիւնախաղաց գագաթմամբ
բարձրանալով՝ Հայաստանի կեդրոնը՝ օգոստոսի
բոցատապ եղանակին անգամ՝ բոլոր շրջակայ
նահանգները զովաշունչ զեփեռներով կը կեն-
դանացընէ : Եփրատն և Տիգրիս, Փոսին և Ս-
րասի՝ հաղորդակցութեան գիւրադնալի ճամբա-
ներ կը կազմէին վերայիշեալ ազգաց հետ : և
Հայոց պաճառաշահութեան կրկին աշխոյժ կու-
տային Կովկասի բազմամբոխ ժողովրդոց, Բաբել-
լոցւոց և Տիւրոսի հետ : Միով բախիւ ինչպէս
այսօրուան օրս լեռնային Ջուճիցերի, այսպէս

աւ երբեմն ժամանակի համանման անոր Հայա-
ստան, ամեն աշխարհ առ ինքն կը հրաւիրէր :

Կորեայի բան չէ անոր ամենայն բարեմանու-
թիւնըը նկարագրել՝ առանց խոտորելու մեր
տեսութենէն : ասկէ յայսմապէս կը տեսնուի՝
թէ իրացընէ Հայ ազգն իսկ ինչպէս այժմ՝ այս-
պէս նաև անցելոյն մէջ շատ կետերով նշանա-
ւոր դեր խաղացեր է հին ազգաց պատմու-
թեան մէջ : և չէ մարթ զանոնք մոռացութեան մէջ
թողուլ՝ առանց մոռնալու անոր գլխի ազգաց
պատմութիւնն և ունեցած մանրամասն և սերտ
յարաբերութիւնը :

Ուստի գէթ զայս 'ի նկատի ունելով. անհէ՞մ
կ'երևի մեզի նաև այն կարծիքն թէ Հայք միտ
իրենց հայրենեաց վատ տնտեսներ եղած են և
օտարաց լաւ ծառայողներ :

Հայք ինչպէս Արշակունեաց հարստութեան
ժամանակ՝ Մեծին Տիգրանայ ձեռքով գողացու-
ցին արեւելքի և արեւմուտքի յաղթով հառվմեա-
կան պետութիւնը, այսպէս ևս Հայկազունեաց
ժամանակ անտեղի չէ կարծել թէ գողացու-
ցած ըլլան մերթ Ասորեստանեայց և Ասորւոց և
մերթ Մարաց պետութիւնքը : Ինչպէս Մեծին
Խորովու առեն զարիական ազգն, և 'ի նոցա-
նէ 'տիրաւոր և հաստատարիմ թնիկ տերաւն իշ-
րեանց՝ մակգիրն ընդունեցան :

